«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

IJEVAN BRANCH OF
"YEREVAN STATE UNIVERSITY"
FOUNDATION

STUDENT SCIENTIFIC
SOCIETY

ՀՀ, Իջևան, 4001, Ուսանողական 1,
sssysuib@gmail.com, ijevan.ysu.am

1 Usanoghakan, 4001, Ijevan, RA
Tel: (+374) 94-16-13-93

ԿԻՍԱՄՅԱԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի

Ուսանողական գիտական ընկերության

(2018-2019 թթ. ուստարվա 2-րդ կիսամյակ)

ք. Իջևան «28» փետրվար, 2019թ.

№	Նախատեսվող միջոցառման բնույթը	Խորագիրը / Թեման	Անցկացման օրը / շաբաթը	Համառոտ նկարագրությունը
Հումանիտար գիտությունների ֆակուլտետ				
1.	Կինոդիտում	«Վահան Տերյան: Վիհի եզերքին»	04.03-09.03	Նախատեսվում է, որ ներկա կլինեն «Հայոց լեզու և գրականություն» և «Պատմություն» մասնագիտությունների 10-15 ուսանողներ:
2.	Հանրամատչելի զեկուցում	«Ֆաբերժեի ձվեր»,	11.03-16.03	«Ֆաբերժեի ձվեր» բառակապակցությունը այսօր ընկալվում է որպես մինչհեղափոխական Ռուսաստանի և Ռոմանովյան դինաստիայի շքեղության և հարստության խորհրդանիշ: <<Ֆաբերժեի ձվերի>> մեջ կան շատ

				արժեքավոր ձվեր, որոնք պատրաստված են անհայտ տաղանդավոր ոսկերիչների կողմից: Զեկուցման նպատակն է մեկ ակնարկի միջոցով ուսանողությանը ներկայացնել ռուսական մշակույթի գլուխգործոցների՝ <<Ֆաբերժեի ձվերի>> պատմությունը:
3.	Կինոդիտում-քննարկում	«Կյաժը» կարճամետրաժ ֆիլմ	18.03-23.03	Կցուցադրվի Քառօրյա պատերազմում զոհված Ռոբերտ Աբաջյանին նվիրված կարճամետրաժ ֆիլմը: Նախատեսվում է, որ ներկա կլինեն հիմնականում «Հայոց լեզու և գրականություն» «Պատմություն» և «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտությունների ուսանողներ:
4.	Հանրամատչելի զեկուցում	<<Ռեննե Մարգրիտ>>	08.04-13.04	Զեկուցման մեջ տեղ կգտնեն կենսագրական տվյալներ հայտնի նկարչի կյանքից, ինչպես նաև կխոսվի նրա նկարչական գործունեության, ստեղծագործությունների մանրամասներից:
5.	Հանրամատչելի զեկուցում	«Արտասովոր թանգարաններ»	15.04-20.04	Զեկուցման ընթացքում կխոսվի աշխարհի արտասովոր թանգարանների մասին, որոնք իրենց գրավչությամբ և այցելուների թվով ամենևին էլ չեն զիջում մյուս

				թանգարաններին:
Տնտեսագիտության ֆակուլտետ				
6.	Սեմինար	«Հայաստանյան բիզնեսի հաջողությունները»	04.03-09.03	Երկօրյա ժամկետում կազմակերպվելու է իրավաբանական անձանց վերավերյալ սեմինար: Առաջին օրը կներկայացվի, թե տնտեսական գործունեություն վարող անձինք և կազմակերպությունները ինչպես են կազմավորվում,թե ինչ նպատակներ են հետապնդում, կթվարկվեն դրանց առանձին տեսակները: 2-րդ օրը կներկայացվեն հայկական մի քանի հաջողակ ֆիրմաների զարգացման նախադրյալները,անցած ուղին և, թե հետագայում համաշխարհային շուկան գրավելու ինչպիսի հեռանկարներ ունեն:
7.	Սեմինար-քննարկում	«Տավուշյան տուրիզմ»	11.03-16.03	Կպարզաբանվի, թե տուրիզմի կոնկրետ որ տեսակներն են գործում Տավուշում, ինչպես խթանել տուրիզմի զարգացումը մարզում: Կքննարկվի, թե տուրիզմի այլ ճյուղեր ինչպիսի պահանջարկ և «ճակատագիր» կունենան, եթե մրցեն արդեն իսկ գերիշխող դիրք գրված մի քանի տուրիստական հաջողված կազմակերպությունների հետ:
8.	Դասախոսությունն-ի շարք ուսանողների կողմից	«ՀՀ տնտեսական իրավիճակը» , «ՀՀ տնտեսական զարգացման	Ապրիլ-մայիս	«Տնտեսագիտություն» կրթական ծրագիրն արդեն 2 տարի է փոխարինվել է

		էվոլյուցիան և հեռանկարները», «Զարգացած երկրների տնտեսական պատմությունը», «Համաշխարհային տնտեսության համառոտ բնութագիրը» թեմաներով		«Ֆինանսներ» կրթական ծրագրով և «Ֆինանսներ» մասնագիտության ուսանողները որոշ կարևոր դասընթացներ չեն անցել: Ուստի կկազմակերպվեն մի քանի ուսուցողական դասեր, որոնց ընթացքում նրանք կծանոթանան Հայաստանի տնտեսությանը, ինչպես նաև առանձին երկրների տնտեսական զարգացման պատմությանը և ուղիներին:
9.	Մասնագիտական «Այլ կերպ»	«Հարստացնենք մեր մասնագիտական բառապաշարը»	22.04-28. 04	Ինտելեկտուալ բառախաղ, որը հնարավորություն կտա «Տնտեսագիտություն», «Ֆինանսներ», «Սերվիս» և «Զբոսաշրջություն» մասնագիտության ուսանողներին արագ կողմնորոշվել և ունեցած բազայով դյուրին բացատրել տնտեսագիտական տերմինները՝ հնարավորին չափով կարճ ժամանակում:
10.	Ինտելեկտուալ խաղ	Տնտեսագիտական տերմիններով	մայիս	Խաղին կմասնակցեն «Ֆինանսներ» և «Տնտեսագիտություն» մասնագիտության ուսանողները՝ երեք- կամ չորսհոգանոց թիմերով: Խաղի ընթացքում տրվելու են տնտեսագիտության և ֆինանսների մասին հարցեր, կլինի նաև տնեսագիտական տերմիններով խաչբառ:
Բնական գիտությունների ֆակուլտետ				
11.	Կինոդիտում-քննարկում	“Социальная сеть” գեղարվեստական ֆիլմ	04.03-09.03	Ֆիլմը կցուցադրվի «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» մասնագիտության

				ուսանողների համար։ Ուսանողները կծանոթանան Մարկ Ցուկենբերգի ուսանողական տարիների հետ,թե ինչպես եւ ինչու նա ստեղծեց “Facebook” սոցիալական ցանցը։
12.	Կինոդիտում	“Большой скачок. Старая и новая картография” և “Принцип работы системы GPS на пальцах” կարճամետրաժ ֆիլմեր	17. 03-23. 03	Ֆիլմը կցուցադրվի «Քարտեզագրություն և կադաստրային գործ» մասնագիտության ուսանողների համար։ Ուսանողները կծանոթանան հին եւ ժամանակակից քարտեզագրությունների տարբերությանը, կսովորեն, թե ինչպես է աշխատում GPS նավիգացիոն համակարգը։
13.	Քննարկում	«Մաթեմատիկայի, Ինֆորմատիկայի և Քարտեզագրության կապը»	22.04-27.04	Նախատեսվում է, որ ներկա կգտնվեն «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» ու «Քարտեզագրություն և կադաստրային գործ» մասնագիտության 10 ուսանող։ Կքննարկվի նշված գիտությունների կապը, նրանց փոխազդեցության ձևերը։
ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ կենտրոնական կառույց				
14.	Սեմինար	«Ինչպե՞ս գրել գիտական հոդված»	04. 03-16. 03	Սեմինարի ընթացքում կնշվեն գիտական հոդված գրելու հիմնական սկզբունքները, կարգը։
15.	Շախմատի կանանց առաջնություն	Շախմատի կանանց առաջնություն	մարտ	Նախորդ կիսամյակի փորձով կազմակերպվելու է շախմատի առաջնություն, սակայն 2 անգամ՝ կանանց և տղամարդկանց համար։ Երկու առաջնությունում

				հաղթածների միջև կկազմակերպվի ընկերական խաղ։
16.	Շախմատի տղամարդկանց առաջնություն	Շախմատի տղամարդկանց առաջնություն	ապրիլ	Նախորդ կիսամյակի փորձով կազմակերպվելու է շախմատի առաջնություն, սակայն 2 անգամ՝ կանանց և տղամարդկանց համար։ Երկու առաջնությունում հաղթածների միջև կկազմակերպվի ընկերական խաղ։
17.	Առցանց հարցում	Ուսանողների՝ գիտաժողովներին, գիտական զեկուցումներին մասնակցելու շահագրգռվածությունը պարզելու համար	Կիսամյակի ընթացքում	Ակնկալվում է պարզել, թե ինչ մոտիվացիա ունեն ԵՊՀ ԻՄ ուսանողները՝ մասնակցելու նմանատիպ ծրագրերին, միաժամանակ պարզելու նաև, թե որ մասնագիտությունների ուսանողներն են առավել շահագրգռված, և որոնք անտարբեր։
18.	Ինտելեկտուալ խաղ	10-ից 12-րդ դասարանի աշակերտների համար	Կիսամյակի ընթացքում	Խաղը նախատեսված է Իջևան քաղաքում և հարակից բնակավայրերում սովորող 10-ից 12-րդ դասարանի աշակերտների համար։ ՈւԳԸ անդամները կայցելեն տարբեր դպրոցներ և կանցկացնեն խաղը։
19.	Ինտելեկտուալ խաղ	Մասնաճյուղային առաջնություն	01.05-11.05	Ամբողջ մասնաճյուղից կկազմվեն թիմեր / ըստ կուրսերի կամ մասնագիտությունների/։ Առաջնության հաղթողը կորոշվի 1 խաղի ընթացքում։

ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ նախագահ՝ Հ. Ղարագյոզյան

ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ քարտուղար՝ Ս. Շահնազարյան